

**ԿԻՍԱՍԱՐԿԱԻԱԳԱՑ ԵՒ ՍԱՐԿԱԻԱԳԱՑ  
ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՂՏԱՏԻ Ս. ԳՐԻԳՈՐ  
ԼՈՒՍԱԻՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ  
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ**

2006-ի Ապրիլի 9-ին Ծաղկազարդի տօնին, Պաղտատի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ կիսասարկաւագաց եւ սարկաւագաց ձեռնադրութիւններ ձեռամբ թեմիս բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Աւագ արքեպս. Ասատուրեանի: Խարտաւիլակութեան պաշտօնը կատարեց Բարեշնորհ Արամ սրկ. Քէթնճեանը: Օրուայ Սուրբ եւ Անմահ Պատարագը մատուցեց Արժանապատիւ Տ. Մեսրոպ քինյ. Գաբրիէլեանը՝ երգեցողութեամբ «Զուարթնոց» դպրաց դասի՝ ղեկավարութեամբ պր. Նուպար Բշտիկեանի:



Ս. Գրական ընթերցումներէն առաջ սկսաւ կիսասարկաւագութեան ձեռնադրութեան արարողութիւնը: Եկեղեցւոյ սպասարկող չորս դպիրներ՝ Շանթ Յովսէփեան, Արարատ Պօղոսեան, Արշակ Դժուարեան եւ Տիգրիս Ստեփանեան, դպրաց դասի երգած «Ուրախ լեր» շարականի ընթացքին ծնկաչոք մօտեցան Սրբազան Հօր յատեան եւ ձեռնադրութեան յատուկ քարոզներու ընդմէջէն, ինչպէս նաեւ աղօթքներու ընթերցումով, անոնք ստացան կիսասարկաւագական աստիճան, երբ Սրբազան Հայրը անոնց շնորհեց բազկուրար կրելու իրաւունք:

Այս արարողութեան յաջորդեց սարկաւագաց ձեռնադրութիւն: Երկու ընծայեալներ՝ Արա Միրզոյեան եւ Սեւան Փալանճեան կիսասարկաւագներ, խարտաւիլակ սարկաւագի առաջնորդութեամբ ծնկաչոք բարձրացան Ս. Խորան:

Սաղմոսներու, շարականներու եւ աղօթքներու աւարտումով հասաւ ձեռնադրութեան խորհրդաւոր պահը, ուր երգուեցաւ «Աստուածային եւ երկնաւոր շնորհ...» աղօթական շարականը: Որմէ ետք Սրբազան Հայրը նորընծաներուն շնորհեց սարկաւագութեան ուրարներ կրելու, ինչպէս նաեւ Ս. Խորանին սպասարկելու իրաւունքը:

Այս հոգեպարար արարողութենէն ետք Նորին Սրբազնութիւնը շնորհաւորեց նորօգ ձեռնադրեալները եւ Ծաղկազարդի Ս. Տօնին առիթով իր քարոզին մէջ խրախուսեց անոնց ըլլալու մեր Մայրենի եկեղեցւոյ հաւատարիմ սպասաւորներ, յիշեցնելով, որ աստիճանի մը ստացման հանգամանքը թող չվերածուի հպարտութեան միջոցի, այլ ընդհակառակը, նոր աստիճանը ըլլայ համեստութեան նշան որպէս սպասաւորութեան նոր ճանապարհ: Նոր աստիճանով բեռ մըն ալ կաւելնայ սպասաւորի ուսին եւ ան՝ ծառայական սիրով պէտք է տանի զայն: Նորին Սրբազնութիւնը, եզրափակելով իր պատգամը, ըսաւ.- «...Երկրիս մէջ տիրող դժուարին պայմաններու մէջ կատարուած եկեղեցական արարողութիւնները եւ մանաւանդ այսօրուայ ձեռնադրութիւնները՝ իրենց հոգեւոր աւիշը կը ստանան մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի յաղթական մուտքէն յերուսաղէմ...: Թող այս արարողութեան, Ս. Պատարագի եւ Ծաղկազարդի շնորհները ըլլան երաշխիք խաղաղութեան եւ անվտանգութեան մեր ժողովուրդի եւ Իրաքի համար»:

Այս ուրախ առիթով Սրբազան Հայրը շնորհաւորեց հաւատացեալ ժողովուրդը, ձեռնասուններուն պարագաները եւ համայն իրաքահայութեանը:

*ԱՐԱՄ ՍՐԿ. ՔԷԹԷՆՃԵԱՆ*